ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

27.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/45

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.11.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել էր հետևյալը.

«Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պաշտոնապես ներկայացնում է բողոք «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների և ՀՀ Գնումների օրենսդրության կոպիտ խախտման դեմ, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված և www.gnumner.am կայքում 2017-11-01 16:11:06 հրապարակված «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման դեմ:

Ընկերությունը ս.թ. հոկտեմբերի 20-ին՝ հրավերով նախատեսված ժամկետում և կարգով, թղթային ձևով «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին է ներկայացրել իր հայտը: Հրավերի 1-ին (միակ) չափաբաժնով

նախատեսվում էր Պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ:

Ս.թ. հոկտեմբերի 25-ին 17:49-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացավ նախապես պաշտոնապես պահանջված 1-ին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից հանձնաժողովին ներկայացված Հրավերի N 6 հավելվածը և նրան կցվող՝ առաջարկվող ապրանքների անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր) պարունակող N 6.1 հավելվածը:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ս.թ. հոկտեմբերի 26-ին ժամը 18:46-ին hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես

- տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանին և Պատվիրատուին Մասնակցի կողմից ներկայացված N6.1 հավելվածում առկա բազմաթիվ կոպիտ սխալների և անհամապատասխանությունների մասին՝ հատ-հատ թվարկելով և մատնանշելով դրանք, և

- համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի՝ խնդրել է հանձնաժողովին տրամադրել 1-ին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված՝ Հրավերի N6 հավելվածին կցվող N6.1 հավելվածի արդեն իսկ շտկած փաստաթղթերի ամբողջական սկանավորված պատճենները:

Ս.թ. հոկտեմբերի 30-ին ժամը 10:29-ին՝ երեք աշխատանքային օր անց, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն կրկին էլեկտրոնային նամակով դիմել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով՝ հիշեցնելով տրամադրել Մասնակցի կողմից ներկայացված N6.1 հավելվածի արդեն իսկ շտկած փաստաթղթերի պատճենները:

Նույն օրը՝ հոկտեմբերի 30-ին 14:40-ին հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանն էլեկտրոնային նամակով հավաստիացրեց, որ «...հանձնաժողովը իր գործողություններն իրականացնում է Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներից չշեղվելով...»

Ս.թ. հոկտեմբերի 31-ին ժամը 15:25-ին հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանից hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստացավ

պահանջված փաստաթղթերի արդեն իսկ «շտկված» պատճենն, այս անգամ արդեն ստորագրման ամսաթվերը նշված՝ 30.10.2017թ.:

Մասնակցի կողմից 30.10.2017թ. ներկայացված փաստաթղթերի՝ այսպես կոչված «շտկված» տարբերակը, ինչպես և նախորդը, նույնպես պարունակում էր բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերի պահանջներին:

Նույն օրը՝ ս.թ. հոկտեմբերի 31-ին ժամը 17:23-ին՝ ընդամենը 2 ժամ անց, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին. «Փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես և Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակը, ներկա փաստաթղթերը նույնպես պարունակում են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերների պահանջներին:

Մանրամասն տեղեկություններն այդ մասին, պաշտոնական ապացույցների հետ մեկտեղ, նույնպես պաշտոնապես կներկայացվեն հանձնաժողովների ուշադրությանն առաջիկա մեկ աշխատանքային օրվա ընթացքում:»

Հաջորդ օրը՝ ս.թ. նոյեմբերի 1-ին ժամը 12:59-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես կրկին տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին, որ 1-ին տեղը զբաղեցրած Մասնակից «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N6.1 հավելվածի՝ «շտկված» տարբերակում այս անգամ էլ առկա են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերի պահանջներին՝ թվարկելով և մանրամասն բացատրելով այդ սխալներն ու անհամապատասխանությունները 3 (երեք) էջից բաղկացած նամակում:

Սակայն նույն օրը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի վերը նշված էլեկտրոնային նամակը ստանալուց հետո ընդամենը 3 ժամ 12 րոպե անց, www.gnumner.am կայքում 01.11.2017թ. ժ.16:11:06 հրապարակվում է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որը նույնիսկ ոչ մի ամսաթիվ և համար չի պարունակում:

Անհասկանալի է, թե ինչու՞ գնահատող հանձնաժողովը՝

- ուշադիր ուսումնասիրել է իրեն և Պատվիրատուին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ս.թ. հոկտեմբերի 26-ին ներկայացված խախտումների ցանկը և առանց որևիցե առարկության

պահանջել է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ից ներկայացնել N6.1 հավելվածի «շտկած» տարբերակը.

- սակայն ս.թ. նոյեմբերի 1-ին ներկայացված ավելի ընդլայնված խախտումների ցանկի դեպքում չի անդրադարձել խնդրի մանրամասն ուսումնասիրությանն, անտեսել ու առհամարել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացված փաստարկներն ու տրված բացատրությունները և ծածուկ ու շուտափույթ որոշում կայացրել, որի կայացման արձանագրությունը երևան չի եկել և 06.11.2017թ. դրությամբ ի սպառ բացակայում է www.gnumner.am կայքում:

Մեզ համար լիովին անբացատրելի է և անհասկանալի, թե ինչպե՞ս ընդամենը 3 ժամ 12 րոպե ժամանակահատվածում գնահատող հանձնաժողովը հասցրեց ուսումնասիրել իրեն ներկայացված բազմաթիվ խախտումների՝ մեր խորին համոզմամբ, անհերքելի փաստերը, գնահատել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից հայտնաբերված բնութագրերի անհամապատասխանությունները հրավերի պահանջներին, այնուհետև կայացնել որոշում պայմանագիրը կնքելու մասին և հրապարակել այն www.gnumner.am պաշտոնական կայքում:

Իսկ միգուցե՞ հանձնաժողովի նպատակն էր, որ Մասնակիցներից ոչ ոք չիմանա և չհասցնի բողոքարկել այդ շուտափույթ կայացրած և ապօրինի որոշումը: Հավաստում ենք, որ նույնիսկ եթե դա կատարվեր, ապա հարցի քննությունը ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի հարթակից միանշանակ կտեղափոխվեր դատական ատյաններ:

Ավելի քան անհասկանալի է և ապշեցուցիչ, թե արդյոք ինչպե՞ս ընդամենը 3 ժամ 12 րոպեի ընթացքում հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանին հաջողվեց ստանալ և ուսումնասիրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի նշված նամակը, մեկտեղ հավաքել նիստ անցկացնելու համար այդ պահին աշնանային արձակուրդում գտնվող դպրոցի աշխատակիցներին՝ հանձնաժողովի անդամներին, և կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով հանձնաժողովից պահանջվող բոլոր գործողությունների կատարումը:

Գտնում ենք, որ վերջին հարցը պետք է ավելի քան մանրակրկիտ ուսումնասիրության առարկա դառնա ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի և, ամենայն հավանականությամբ, նաև իրավապահ մարմինների կողմից:

Ստորև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն համառոտ ներկայացնում է ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությանը՝«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին ներկայացված և ավելի քան մանրամասն պարզաբանված

«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր՝ շտկած N6.1 հավելվածում բազմաթիվ կոպիտ սխալներն և անհամապատասխանությունները.

1) Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված N1-ով պարտադիր պահանջվող 3 ապրանքների «Ապրանքային նշանները» նշված են ակնհայտորեն սխալ:

Կրկին, ինչպես և ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակում, Մասնակիցը պահանջվող տեղեկությունների փոխարեն (Ապրանքային նշաններ՝ Hitachi Starboard, Epson, երրորդը՝ բացառապես պարզ չէ) համառորեն նշում է իր կողմից առաջարկվող ապրանքների (սարքավորումների) մակնիշները (Hitachi Starboard LinkEZ2 Interactive System, Epson VS250 3200-Lumen SVGA 3LCD Projector, PL PJ-1400 W)...

2) Պարտադիր պահանջվող 3 ապրանքների նշված 3 արտադրողների անվանումները կրկին, ինչպես և ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակում, նշված են ակնհայտորեն սխալ.

ա) Մասնակցի կողմից որպես արտադրող մատնանշված Hitachi interactic solutions ընկերությունը պարզապես գոյություն չունի:

Հանձնաժողովի ուշադրությանը ս.թ. հոկտեմբերի 26-ի և նոյեմբերի 1-ին նամակներով ներկայացված Hitachi ընկերությունների խմբում, որն իր կազմում ընդգրկում է գրեթե 800 առանձին և բոլորովին տարբեր բնագավառներում աշխատող ընկերություններ (http://www.hitachi.com/corporate/about/group/index.html), Hitachi interactic solutions անունով ընկերություն ուղղակի չկա:

Ավելին, Hitachi Solutions, Ltd. ընկերությունը՝ «StarBoard» ապրանքանիշի տակ վաճառվող ինտերակտիվ գրատախտակների համաշխարհային մատակարարը, 2016թ. փետրվարի 1-ից պարզապես վաճառել է չինական ShenZhen iBoard Technology Co., Ltd ընկերությանը StarBoard բիզնեսը և StarBoard ապրանքանիշը:

Նշված տեղեկություններն առկա են երկու վերոհիշյալ արտադրողների պաշտոնական WEB կայքերում՝ http://eu.hitachi-solutions.com/en/news.html և http://www.starboard-solution.com/news/:

բ) Մասնակցի կողմից որպես արտադրող մատնանշված Epson ընկերությունը պարզապես գոյություն չունի՝ խոսքը պետք է գնա հայտնի ճապոնական Seiko Epson Corporation ընկերության մասին (http://global.epson.com/company/, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին):

գ) Մեզ ուղղակի չհաջողվեց որևիցե կերպ գտնել Մասնակցի կողմից որպես արտադրող մատնանշված Allegri ընկերությունը՝ ենթադրում ենք, որ խոսքը պետք է գնա ռուսական «ПРОИЗВОДСТВЕННАЯ КОМПАНИЯ АЛЛЕГРИ» ընկերության մասին (http://www.kreplenie.tv/about-us՝ արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից):

3) №6.1 հավելվածում Հրավերով պարտադիր պահանջվող և աղյուսակում նշված 3 (երեք) ապրանքներից միայն 1 (մեկ) «Ծագման երկիր»՝ Ֆիլիպիններ (Epson VS250 պրոյեկտոր) համապատասխանում է իրականությանը:

ա) Ինչ վերաբերում է Starboard LinkEZ2 սարքավորման համար՝ որպես «Ծագման երկիր» մատնանշված Ճապոնիային, ապա դա ինքնին արդեն իսկ չի համապատասխանում իսկությանը, քանզի StarBoard ապրանքանիշը 2016 թ. փետրվարի 1-ից ուղղակի պատկանում է հենց չինական ShenZhen iBoard Technology Co., Ltd ընկերությանը, որը միանշանակ Ճապոնիայում արտադրական հզորություններ չունի:

բ) Ինչ վերաբերում է PL PJ-1400 W պրոյեկտորի կախիչի համար՝ որպես «Ծագման երկիր» մատնանշված Ռուսաստանին, ապա մեզ ցավոք սրտի չհաջողվեց գտնել այդ պնդումը հաստատող որևիցե ապացույց:

Փաստն այն է, որ նույնիսկ ենթադրվող արտադրողի՝ ռուսական «ПРОИЗВОДСТВЕННАЯ КОМПАНИЯ АЛЛЕГРИ» ընկերության WEB կայքում նշված մակնիշի պրոյեկտորի կախիչը իսպառ բացակայում է՝ թե՛ առաստաղային կախիչների, թե՛ պատին ամրացվող կախիչների շարքերում: Նշված պրոյեկտորի կախիչը առկա չէ և www.http://allegri-trade.ru WEB կայքում բերված կախիչների շարքում: Արտատպումները նշված պաշտոնական WEB կայքերից կցված են սույն բողոքին:

4) №6.1 հավելվածի «Տեխնիկական բնութագրեր» հատվածում իսպառ բացակայում են Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված N1-ով պարտադիր պահանջվող գրատախտակը, նրա մակնիշը, արտադրողի անվանումը, ինչպես նաև մանրամասն տեխնիկական բնութագրերը:

ա) Մասնակցի կողմից առաջարկված Starboard LinkEZ2 սարքավորումն իրենից ներկայացնում է ընդամենը 249 ԱՄՆ դոլարով վաճառվող (https://www.cnet.com/products/hitachi-starboard-link-ez2-pen-infrared-interactive-unit/) 1 հատ մագնիսական ինֆրա-կարմիր սենսոր (Magnetic Infra Red Sensor) մոտ 51 x 7.6 x 4 սմ չափսերով (ի դեպ, Մասնակիցը նույնիսկ այս սարքի չափսերը (20.1 x 3.0 x 1.6 inches) սխալ է վերահաշվարկել և նշել աղյուսակում), որը միանում է համակարգչին և աշխատում է միայն

տարիներ առաջ արտադրությունից հանված և ավելի քան հնացած MS Windows XP (32 bit) / Vista / Windows 7 ծրագրային ապահովման հետ:

Այս ինֆրա-կարմիր սենսորն իր կազմում չի ներառում պահանջվող գրատախտակ, իսկ այս սարքը համալրելու համար արտադրողը որպես օպցիա առաջարկում է առանձին գնով գնել 2 տարբեր տիպի էլեկտրոնային գրիչներ (ի դեպ, Մասնակիցը տեխնիկական բնութագրում նշում է գրիչներից մեկի չափսերը, սակայն չի նշում, թե արդո՞ք այդ գրիչը ներառված է առաջարկած Starboard LinkEZ2 սարքավորման կազմում, թե՝ ոչ):

բ) Starboard LinkEZ2 մակնիշի սարքավորումների տեղեկատվական բրոշուրում հստակ նշված է, որ Starboard LinkEZ2 սարքավորումն ապահովում է հրավերով պարտադիր պահանջվող 3 միաժամանակյա հպման փոխարեն միայն 2 միաժամանակյա հպում (Use your finger to annotate, fist to scroll and two fingers to erase or zoom in and out):

Առաջարկած կախիչի տեխնիկական բնութագրերը վերլուծելու անհրաժեշտություն չենք տեսնում, սակայն պետք է նշենք, որ զարմացնում է ֆիզիկայի օրենքներին հակասող Մասնակցի կողմից նշված 3600 (ըստ հավանականության՝ աստիճանի) շրջադարձի հնարավորությունը:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից՝ գտնում ենք, որ Պատվիրատուն դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝

- 5-րդ մասի 2-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»

- 6-րդ մասը, այն է՝ «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված...»:

Վերը նշվածից միանշանակ և ակնհայտ երևում է, որ խախտվել են և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունն, այն է «... մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին

համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)...»:

- 46-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները...».

- 47-րդ կետը, այն է՝ «...առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ... սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...»:

- 48-րդ կետի 2-րդ ենթակետն, այն է՝ «... առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում... չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին...»»:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով խնդրել է՝ անվավեր ճանաչել «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու որոշումները:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Էդուարդ Սաղաթելյանը և Արմինե Խամոյանը:

2. <u>«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.11.2017թ. գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է 26.10.2017թ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խախտումների ցանկը և առաջարկել «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերանայել իր կողմից ներկայացված փաստաթղթերը: «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկվել են սահմանված ժամկետներում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություններն իրականացվել են կայքերի միջոցով և այդ կայքերում առկա տեղեկատվության հիման վրա, ինչից ելնելով, հանձնաժողովը «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և նրան ճանաչել ընտրված մասնակից:

Անդրադառնալով պայմանագիր կնքելու մասին որոշմանը՝ ուզում եմ նշել, որ հրապարակումն իրականացվել է արդյունքների գնահատման նիստի հաջորդ օրը, այսինքն՝ սահմանված ժամկետներում:

Ինչ վերաբերում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված այն տեղեկատվությանը, որ հանձնաժողովի անդամները այդ ժամանակահատվածում գտնվել են աշնանային արձակուրդում, ուզում եմ նշել, որ այն չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ հանձնաժողովի կողմից կայացված ոչ մի որոշում չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, հանձնաժողովի գործողությունները չեն հանգեցրել որևէ մասնակցի իրավունքների խախտմանը, չեն եղել խտրական և չեն սահմանափակել մրցակցությունը»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Հայկ Ղազարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 08.11.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.10.2017թ. նիստի ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 2, 27.10.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 և 31.10.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 01.11.2017թ. էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ «էլեկտրոնային գրատախտակ» գնման առարկայի տեխնիկական բնութագիրը սահմանված է հետևյալ բովանդակությամբ. Ակտիվ մակերեսի չափերը ոչ պակաս 77″, հնարավորություն առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանքի համար՝ ձեռքի հպման եղանակով (touch):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից):

Հանձնաժողովը 20.10.2017թ. նիստի ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով որոշել է «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետով Հանձնաժողովը որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

27.10.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով հանձնաժողովը որոշել է ծանուցել «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին հրավերի պահանջների նկատմամբ ներկայացված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության վերաբերյալ՝ նրան առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներքոհիշյալ անհամապատասխանությունները: Մասնավորապես, Հանձնաժողովն արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

-Ներկայացված փաստաթղթերում բացակայում են ներկայացման ամսաթվերը.

-N6.1 հավելվածում թվարկվող և հրավերի N1 հավելվածով պարտադիր պահանջվող «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» մասում առկա 3 ապրանքների

անվանումներից՝ էլեկտրոնային գրատախտակի հավաքածուի բաղկացուցիչ մասերից, նշված է միայն մեկը, մնացածի վերաբերյալ որևէ տեղեկատվություն արտացոլված չէ.

-N6.1 հավելվածում հրավերում թվարկվող և պահանջվող 3 ապրանքներից նշված են միայն երկուսի «ապրանքային նշանները», այն էլ՝ թերություններով.

-N6.1 հավելվածում հրավերում թվարկվող և պահանջվող 3 ապրանքներից նշված են միայն երկուսի «արտադրողի անվանումները», այն էլ՝ թերություններով.

-N6.1 հավելվածում հրավերում թվարկվող և պահանջվող 3 ապրանքներից աղյուսակում նշված են միայն մեկի «ծագման երկիրը»՝ Ճապոնիա, որը չի համապատասխանում իսկությանը, հետևաբար, անհասկանալի է, թե որ ապրանքներին է վերաբերում վերջինս.

-N6.1 հավելվածում բացակայում է պրոյեկտորի մակնիշը, արտադրողի հստակ անվանումը և տեխնիկական բնութագիրը.

-N6.1 հավելվածում էլեկտրոնային գրատախտակի 77″ անկյունագիծ ունեցող ակտիվ մակերեսից և 3 միաժամանակյա հպման հնարավորությունից բացի, բացակայում է էլեկտրոնային գրատախտակի թե մակնիշը, և թե տեխնիկական բնութագիրը:

31.10.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի շտկված փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում և սահմանված կարգով:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն, մինչդեռ վերջինիս կողմից ներկայացված հայտի N6.1 հավելվածում՝ առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում (շտկված տարբերակում) առկա են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերների պահանջների նկատմամբ: Մասնավորապես, բողոքաբերը նշել է հետևյալ դիտարկումները.

1) Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ պարտադիր պահանջվող 3 ապրանքների ապրանքային նշանները նշված են ակնհայտորեն սխալ: Մասնակիցը պահանջվող ապրանքային նշանների փոխարեն նշել է իր կողմից առաջարկվող սարքավորումների մակնիշները (մոդելները) (Hitachi Starboard LinkEZ2 Interactive System, Epson VS250 3200-Lumen SVGA 3LCD Projector, PL PJ-1400 W) և այլն:

2) Պահանջվող 3 ապրանքների նշված 3 արտադրողների անվանումները նույնպես նշված են սխալ: Այսպես, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից որպես արտադրող մատնանշված Hitachi interactic solutions, ինչպես նաև Epson և Allegri անվանումով ընկերություններ, ըստ բողոքաբերի, պարզապես գոյություն չունեն:

3) №6.1 հավելվածում Հրավերով պարտադիր պահանջվող և աղյուսակում նշված 3 ապրանքներից միայն մեկի ծագման երկիրն է (Epson VS250 պրոյեկտոր (Ֆիլիպիններ)) համապատասխանում իրականությանը: Ինչ վերաբերում է Starboard LinkEZ2 սարքավորման համար որպես ծագման երկիր մատնանշված Ճապոնիային, ապա, Ընկերության կարծիքով դա չի համապատասխանում իսկությանը, քանի որ StarBoard ապրանքանիշը 2016 թ. փետրվարի 1-ից պատկանում է չինական ընկերությանը, և Ճապոնիայում արտադրական հզորություններ չունի: PL PJ-1400 W պրոյեկտորի կախիչի համար՝ որպես ծագման երկիր նշված ՌԴ, պնդումը հաստատող որևիցե ապացույց Ընկերությունը չի գտել:

4) N6.1 հավելվածի «Տեխնիկական բնութագրեր» հատվածում բացակայում է Հրավերով պահանջվող գրատախտակի վերաբերյալ նշումը, նրա մակնիշը, արտադրողի անվանումը, ինչպես նաև մանրամասն տեխնիկական բնութագրերը: Մասնակցի կողմից առաջարկված Starboard LinkEZ2 սարքավորումն իրենից ներկայացնում է մագնիսական ինֆրա-կարմիր սենսոր, որն իր կազմում չի ներառում պահանջվող էլեկտրոնային գրատախտակը: Բացի այդ, Starboard LinkEZ2 սարքավորումն ապահովում է հրավերով պարտադիր պահանջվող 3 միաժամանակյա հպման փոխարեն միայն 2 միաժամանակյա հպում:

Ընկերությունը բողոքով նշել է նաև, որ ներկայացված փաստարկների համար որպես տեղեկությունների ստացման աղբյուր իր կողմից օգտագործվել են ներքոհիշյալ արտադրողների պաշտոնական WEB կայքերը՝ (http://eu.hitachi-solutions.com/en/news.html, http://www.starboard-solution.com/news/, http://global.epson.com/company/, http://www.kreplenie.tv/about-us/):

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և կարծիք հայտնեց, որ Պատվիրատուն դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը, այն է՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի հայտի գանահատելիս Հանձնաժողովն առաջնորդվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ

սահմանված պահանջներով, իսկ առաջարկած ապրանքի ամբողջական նկարագրի գնահատումը Հանձնաժողովի կողմից իրականացվել է նաև համացանցային կայքերի միջոցով և այդ կայքերում առկա տեղեկատվության հիման վրա:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողովը «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցմամբ առաջարկել է վերջինիս շտկել արձանագրությամբ նշված անհամապատասխանությունը, ինչից հետո Հանձնաժողովը «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և նրան ճանաչել ընտրված մասնակից:

Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց նաև, որ «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատելիս Հանձնաժողովը հիմնական ուշադրությունը դարձրել է նշված նկարագրում պարունակվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման վրա, իսկ մնացած այլ հատկանիշները՝ ապրանքային նշանները, արտադրողների անվանումները, ծագման երկիրը վերջինիս կողմից համարվել են գնահատման համար ոչ առաջնահերթ նշանակություն ունեցող հատկանիշներ:

Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ Հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրված անհամապատասխանությունները Հանձնաժողովի կողմից մանրամասն և սպառիչ նկարագրված չեն, ինչն էլ, ըստ էության, թույլ չի տվել մասնակցին ներկայացված փաստաթղթում կատարել անհրաժեշտ շտկումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների

գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի Հրավերի՝

• 8.12 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 8.16 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.12 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն

հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

- 8.19 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 8.20 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքով ներկայացված փաստարկների համար, որպես տեղեկությունների ստացման աղբյուր Ընկերության կողմից օգտագործվել է համացանցային կայքերում տեղադրված տեղեկատվությունը:

Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը չի հանդիսանում պաշտոնական աղբյուրից ստացված տեղեկատվություն, կամ իրավասու մարմնի կողմից տրամադրված գրավոր եզրակացություն, հետևաբար Հանձնաժողովի կողմից այն չէր կարող օգտագործվել՝ Հրավերով սահմանված պահանջներին մասնակցի ներկայացրած տվյալների համապատասխանությունը ստուգելու համար:

«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի «ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ» բաժնի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար «էլեկտրոնային գրատախտակների» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որը խմբավորված է 1 չափաբաժնում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդն արձանագրում է, որ Հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում Պատվիրատուի կողմից նույն Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված էլեկտրոնային գրատախտակը, որի բնութագիրը ներառում է նաև պրոյեկտորի կախիչը և պրոյեկտորը:

Խորհրուրդն արձանագրում է, որ «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի N6.1 հավելվածում՝ առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, Մասնակցի կողմից նշվել են առաջարկվող ապրանքի՝ «էլեկտրոնային գրատախտակ»-ի տեխնիկական բնութագրին վերաբերող տվյալները, և չեն նշվել N6.1 հավելվածով պահանջվող այլ վավերապայմանները՝ ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, իսկ Մասնակցի կողմից առաջարկված Starboard LinkEZ2 սարքավորումն իրենից ներկայացնում է մագնիսական սենսոր, որն իր կազմում չի ներառում պահանջվող էլեկտրոնային գրատախտակը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ բացակայում է ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն և սպառիչ նկարագրությունը, ինչը հանդիսանում է Կարգի 46-րդ և Հրավերի 8.16 կետերով սահմանված պահանջների խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Դադարեցնել «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացրած՝ «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև 31.10.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացրած՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**